

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 233-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ 149-Ա որոշում

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

**Հաշվեքննության
առարկան**

Արտակարգ իրավիճակների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը**

2020թ. օգոստոսի 17-ից մինչև սեպտեմբերի 30-ը և նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 25-ը

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

**Հաշվեքննություն
իրականացնող
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

I. Ընդհանուր մաս

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև բնածին և մարդածին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման, իրականացման համակարգման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման աշխատանքների համակարգման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության սրացման, ամփոփման, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգման, պետական պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովման, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների համակարգման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիաների տրամադրման, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման, հաշվառման, ինչպես նաև լիցենզավորման ծառայությունների մատուցման ապահովման, արտակարգ իրավիճակների, աղետների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բուժօգնության ցուցաբերման և բուժօգնության միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպչական և ռազմավարական հիմունքների մշակման, ՀՀ պաշտպանության կազմակերպման մասնակցության (խաղաղ ժամանակ ՀՀ պաշտպանության ապահովման ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և կիրառման պլանավորումը և ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում այդ ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի) ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

II. Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի վերաբերյալ

«ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Նախարարությանը սահմանված խնդիրների իրականացման համար ընդհանուր թվով բյուջետային 10 ծրագրերի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 15,308,673.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման համաձայն նախատեսվել է տարեկան ծախսերը ավելացնել 269,424.0 հազ. դրամով, ինչի արդյունքում 2020թ. տարեկան ճշգրտված պլանը կազմել է 15,578,097.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշմամբ 2020թ. առաջին կիսամյակի համամասնությունը սահմանվել է շուրջ 49%, կամ առաջին կիսամյակի ճշգրտված պլանը կազմել է 7,279,466.5 հազ. դրամ:

Ըստ ծրագրերի Նախարարության առաջին կիսամյակի ծախսային ցուցանիշները և ծրագրերի փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղայի ն ծախս	Կատարման %
Հիդրոօդերևութաբանական ծառայություններ	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	551,519.0	551,519.0	100.0
Տեխնիկական անվտանգության կանոնակարգում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	73,444.8	73,444.8	100.0
Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	56,827.6	56,827.6	100.0
Սեյսմիկ պաշտպանություն	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	373,195.7	373,195.7	100.0
Փրկարարական ծառայություններ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4,116,108.9	3,484,114.5	84.6
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	944,426.5	650,727.0	68.9
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	8,854.7	8,854.7	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	78,912.2	77,374.5	98.1
	- Կոմունալ ծառայություններ	5,628.3	5,414.4	96.2
	- Ներքին գործուղումներ	15,358.3	5,404.8	35.2
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	46,518.3	6,789.1	14.6
	- Տրանսպորտային նյութեր	97,158.4	79,743.7	82.1
	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	7,795.5	7,795.5	100.0
	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	3,629.0	3,629.0	100.0
Ռազմավարական	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և	157,306.0	157,306.0	100.0

նշանակության պաշարների կառավարում	համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին			
Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	322,944.1	308,923.7	95.7
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	65,868.3	44,879.0	68.1
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	31,681.7	31,681.7	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	26,098.5	24,151.8	92.5
	- Կոմունալ ծառայություններ	206.1	174.0	84.4
	- Ներքին գործուղումներ	1,301.7	113.9	8.8
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	1,692.2	16.8	1.0
	- Տրանսպորտային նյութեր	7,948.8	7,410.0	93.2
	- Էներգետիկ ծառայություններ	551,519.0	551,519.0	100.0

III. Տեղեկատվության տրամադրման վերաբերյալ

Հաշվեքննության շրջանակներում Հաշվեքննիչ պալատը 13.08.2020թ. թիվ ՀՊԵ-347 գրությամբ դիմել էր Նախարարությանը՝ հայցելով տրամադրել հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվություն, որի վերաբերյալ պատասխան գրությունը հաշվեքննիչ պալատը ստացել է 23.09.2020թ.: Արդյունքում, նախարարության կողմից չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ տեղեկատվությունը չի տրամադրվել նշված հոդվածով սահմանված ժամկետում: Հայցվող տեղեկատվության մի մասը Նախարարության կողմից տրամադրվել է էլեկտրոնային եղանակով, որը եղել է ոչ ամբողջական, դասակարգված չի եղել ըստ հարցման ձևաչափի (էջերի կամ բաժինների), իսկ հարցման որոշ կետերի վերաբերյալ (Հիմնարկի ամփոփ հաշվեկշիռը՝ ըստ ակտիվների և պասիվների (Ձև Հ-7, 31.12.2019թ. դրությամբ, 2020թ. առաջին կիսամյակի հաշվետվություն՝ Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ (Ձև Հ-8), գույքագրման արդյունքների հիման վրա կազմված եզրափակիչ ակտ և այլն) տեղեկատվություն ընդհանրապես չի տրամադրվել:

Աին դիրքորոշում: Հարկ է նշել, որ «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» (Ձև Հ-8) հաշվետվությունը հրապարակված է եղել ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում, որի համապատասխանությունը ստուգված է, ինչ վերաբերում է «Հիմնարկի ամփոփ հաշվեկշիռը՝ ըստ ակտիվների և պասիվների» (Ձև Հ-7) 31.12.2019թ. դրությամբ, ինչպես նաև 2020թ. առաջին կիսամյակի «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» (Ձև Հ-8) հաշվետվության ներկայացմանը՝ նշենք, որ նշված տեղեկատվությունից LS Finance համակարգչային ծրագրով կարող է օգտվել ստուգող մարմնի յուրաքանչյուր աշխատակից: Ինչ վերաբերում է տեղեկատվությունը պահանջվող ձևաչափով թղթային վերածելուն, ապա այն պահանջում է ժամանակ և ռեսուրսներ, որը փարեկերջի շաբաթների ընթացքում որևէ մարմին չունի, ավելին, պահանջված ձևաչափի ապահովումը կիսաթարի նախարարության բնականոն գործընթացը:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել: «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն, անկախ այս կամ այն տեղեկատվության հրապարակման առկայությունից, ձևաչափից կամ

կարգավիճակից, հաշվեքննության օբյեկտը պարտավոր է Հաշվեքննիչ պալատի հարցմանն ի պատասխան տրամադրել պահանջվող փաստաթղթերը օրենքով սահմանված ժամկետում և ձևաչափով:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ տարեվերջին որևէ մարմին չունի համապատասխան ժամանակ և ռեսուրսներ, պահանջված ձևաչափով տեղեկատվությունը տրամադրելուն, ապա՝ Հաշվեքննիչ պալատի կողմից տեղեկատվության հայցման վերաբերյալ գրությունը Նախարարությունը ստացել է 13.08.2020թ.-ին և օրենքով պարտավոր էր պատասխանել մինչև 13.09.2020թ., ինչը որևէ կերպ տարեվերջ չի կարող համարվել:

Միաժամանակ, հարկ է նշել, որ պահանջված մի շարք փաստաթղթեր (օինակ՝ գույքագրման արդյունքների հիման վրա կազմված եզրափակիչ ակտ) պետք է կազմված լիներ դեռևս հաշվեքննությունից առաջ և դրանց տրամադրումը որևէ ռեսուրս և ժամանակ չէր պահանջում:

IV. Անհամապատասխանությունների առկայության վերաբերյալ

Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, 2020թ. առաջին կիսամյակում Նախարարության փաստացի ծախսը կազմել է 7,028,819.3 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 6,187,029.4 հազ. դրամ, ինչի արդյունքում 2020թ. առաջին կիսամյակի ծախսերի փաստացի կատարողականը կազմել է 84.9%: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է եղել հիմնականում «Փրկարարական ծառայություններ» ծրագրի ծախսերի ցածր կատարողականով: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հունիս ամսվա աշխատավարձի ծախսերը նախատեսվել են առաջին կիսամյակի ծախսերում, սակայն վճարվել են հուլիս ամսին:

Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 388,353.0 հազ. դրամ, ընդ որում՝ 200,603.63 հազ. դրամը նախորդ տարվա բյուջեից: Առաջին կիսամյակի ավարտին Նախարարության ընդհանուր դեբիտորական պարտքերը կազմել են 343,677.3 հազ. դրամ, որից 275,242.0 հազ. դրամը նախորդ տարվա բյուջեից:

Դեբիտորական պարտքերը հիմնականում ձևավորվել են Փրկարար ծառայության պահուստավորված միջոցների հաշվին, մասնավորապես՝ 2020թ. առաջին կիսամյակի վերջին դեբիտորական պարտք ներառել են՝ «Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ (46,051.7 հազ. դրամ)», «Պահեստավորված տրանսպորտային նյութեր (151,444.6 հազ. դրամ)» և «Պահեստավորված հատուկ նպատակային այլ նյութեր (31,393.9 հազ. դրամ)» հոդվածները:

Կրեդիտորական պարտքերը տարեսկզբին կազմել են 56,037.72 հազ. դրամ և ամբողջապես ձևավորվել է նախորդ տարվա բյուջեից, որը կիսամյակի արդյունքներով ամել է կազմելով 972,466.01 հազ. դրամ:

2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով կրեդիտորական պարտքեր ձևավորվել են հիմնականում աշխատողների վարձատրության հոդվածով, որը պայմանավորված է եղել նրանով, որ հունիս ամսվա աշխատավարձերը վճարվել են հուլիս ամսին:

Ծրագրերի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների մասին: Նախարարության կողմից «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» (Ձև Հ-8) հաշվետվությունը հաշվեքննողներին չի տրամադրվել: Նախարարության կողմից իրականացվող բյուջետային 10 ծրագրերի համար սահմանվել են ընդհանուր թվով 165 արդյունքային ցուցանիշներ, ընդ որում՝ «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» և «Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրերի գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներ չեն սահմանվել:

ԱԻՆ դիրքորոշում: ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունիս 23-ի թիվ 311-Ա հրամանի 199-րդ կետի համաձայն պետական մարմնի վարչական բնույթի գործառնությունների մասով ոչ ֆինանսական չափորոշիչներ չեն սահմանվում: Հրամանի 201-րդ կետի համաձայն վարչական բնույթի ծրագրերի գծով բյուջետային Փաստաթղթերում վերջնական արդյունքի ցուցանիշներ չեն սահմանվում, ինչ վերաբերում է «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» ծրագրի գծով արդյունքային ցուցանիշներին. ապա դրանք չեն սահմանվում՝ հաշվի առնելով գաղտնիությունը:

Հաշվեքննողի արձագանք: Դիրքորոշման երկրորդ մասը չի ընդունվել, քանի որ պետական գաղտնիք պարունակող ծրագրերի համար ևս սահմանվում են արդյունքային ցուցանիշներ, որոնք հրապարակման ժամանակ մակնշվում են «Գաղտնի» մակագրությամբ և դրանք հասանելի են Օրենքով սահմանված կարգով:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվության, ընդհանուր թվով 146 արդյունքային (կատարողական) ցուցանիշների մասով Նախարարության կողմից ապահովվել է 100% կատարողական, թվով 16 արդյունքային ցուցանիշներ թերակատարվել են, իսկ թվով 3-ը՝ գերակատարվել:

➤ **Աշխատանքի վարձատրություն**

Նախարարության աշխատակազմին (ներառյալ փրկարար ծառայության աշխատակիցներ) պետական բյուջեից աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. առաջին կիսամյակի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 5,489,884.2 հազ. դրամ:

Նախարարության աշխատակազմի համար կիսամյակային ճշգրտված պլանը կազմել է 420,494.10 հազ. դրամ, իսկ 30.06.2020թ. դրությամբ փաստացի ծախսը կազմել

է 433,581.87 հազ. դրամ, կամ գերաճախսը՝ 9,4%: Հաշվետու ժամանակահատվածում դրամարկղային ծախսը կազմել է 385,484.37 հազ. դրամ, կամ փաստացի կատարողականը՝ 92%:

**Հաստիքային միավորների
թիվը 11-ով նվազեցնելուն
զուգահեռ աշխատավարձի
ֆոնդը համապատասխան
չափով չի նվազեցվել**

Համաձայն Նախարարության բյուջետային հայտում ներկայացված հաստիքացուցակի և ծախսերի հաշվարկման Ձև 16 հավելվածի, աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում դրվել է ընդհանուր թվով 240 հաստիքային միավոր, իսկ աշխատավարձի ֆոնդը կազմել է 996,513.3 հազ. դրամ: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թեև ՀՀ Վարչապետի 26.11.2019թ N 1757-Ա որոշման 1-ին

կետի համաձայն, 2020թ. մարտի 1-ից հաստիքային միավորների թիվը 240-ի փոխարեն սահմանվել է 229 միավոր, այնուամենայնիվ, հաստիքային միավորների թիվը 11-ով նվազեցնելուն զուգահեռ աշխատավարձի ֆոնդը համապատասխան չափով չի նվազեցվել, այլ մնացել է անփոփոխ՝ 996,513.3 հազ.դրամ:

ԱԻՆ դիրքորոշում: 2020 թվականի բյուջետային հայտը չի նվազեցվել, քանի որ աշխատավարձի ֆոնդի հաշվին պետք է իրականացվեր բյուջետային միջոցների վերաբաշխում՝ աադիտորական ծառայություններ պատվիրելու համար, որը չեղյալ է հայտարարվել վարչապետի հանձնարարությամբ միանման պահանջներ սահմանելու նպատակով, այնուհետև, 2020 թվականի սեպտեմբերին հայտարարվել է աուդիտորական ծառայությունների մատուցման մրցույթ, որը չի կայացել մասնակիցների մասնակցության բացակայության պատճառով:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ նշված վերաբաշխումը անհրաժեշտ էր իրականացնել բյուջետային հայտում կամ պետական բյուջեի մասին օրենքում, ինչը նախքան հաշվեքննությունը դեռևս չի իրականացվել:

Փրկարար ծառայության աշխատակիցներին աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. առաջին կիսամյակի ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 5,069,390.1 հազ. դրամ (3544 հաստիքային միավոր): 30.06.2020թ. դրությամբ փաստացի ծախսը կազմել է 4,860,274.80 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 4,143,696.16 հազ. դրամ, կամ փաստացի կատարողականը կազմել է 82%: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է եղել նրանով, որ հունիս ամսվա աշխատավարձի ծախսերը նախատեսվել են առաջին կիսամյակի ծախսերում, սակայն վճարումը կատարվել է հուլիս ամսին:

Աղյուսակ 2.

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամ. ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	%
--------	--------	------------------------	------------------------------------	----------------------	-----------------	---

Փրկարարական ծառայություններ	- Լճիառողների սեփառակրծեր և հավելյալ վնասներ	8,596,060.20	4,116,108.90	3,484,114.51	4,176,041.35	84.6
	- Պարգևատրումներ, դրամական իրավունքներ և հատուկ վնասներ	1,967,555.20	944,426.50	650,726.95	675,378.75	68.9
	- Բաղադրանքային, դատական և արտադրանքային ծառայությունների պարգևատրում	17,709.30	8,854.70	8,854.70	8,854.70	100.0
Արտադրող իրավունքների բնագրային և արտադրանքային վնասներ, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	- Լճիառողների սեփառակրծեր և հավելյալ վնասներ	775,065.90	322,944.10	308,923.68	353,220.01	95.7
	- Պարգևատրումներ, դրամական իրավունքներ և հատուկ վնասներ	158,084.00	65,868.30	44,878.99	48,680.16	68.1
	- Բաղադրանքային, դատական և արտադրանքային ծառայությունների պարգևատրում	63,363.40	31,681.70	31,681.70	31,681.70	100.0
Ընդամենը		11,577,838.00	5,489,884.20	4,529,180.53	5,293,856.67	-

Աշխատանքի վարձատրության ներքին վերահսկողության համակարգի թերություններ և անհամապատասխանություններ

Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի հետ կապված հարցեր:

Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև փրկարար ծառայության ստորաբաժանումների կողմից աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը ֆինանսատնտեսագիտական վարչություն ներկայացվում է ընթացիկ ամսվա 22-25-ն ընկած ժամանակահատվածում: Ընդ որում, տեղեկագրերի ներկայացման համար որևէ ներքին ընթացակարգ սահմանված չէ: Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, ինչպես նաև անաշխատունակության թերթիկները, ֆինանսատնտեսագիտական վարչություն են ներկայացվում հաշվետու ամսվա ավարտից 5-ից 8 օր առաջ, սակայն տեղեկագրերի վրա որպես փաստացի ներկայացման օր նշվում է ամսվա վերջին օրը: Արդյունքում, հաշվետու ամիսն ավարտվելուց 5-ից 8 օր առաջ և հաջորդիվ օրերին տեղի ունեցող փոփոխությունները կամ չեն արտացոլվում տեղեկագրերում, կամ փոփոխության են ենթարկվում հաստատված փաստաթղթերը: Մինևույն ժամանակ, թեև Նախարարությունում ներդրված է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (Mulbery), այնուհանդերձ, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերը ֆինանսատնտեսագիտական վարչություն ներկայացվում են առանց համակարգի օգտագործման:

Աշխատավարձի հաշվարկի հսկողության համակարգի ռիսկեր:

Նախարարության, այդ թվում՝ փրկարար ծառայության, աշխատանքի վարձատրության համար հաշվարկները կատարվում են Excel ծրագրի միջոցով, որտեղ յուրաքանչյուր ամիս ֆինանսատնտեսագիտական վարչության աշխատակիցները մուտքագրում են ստաժի, հաշվարկային գործակցի և այլ փոփոխականների վերաբերյալ տվյալներ: Աշխատավարձերի հաշվարկման ավտոմատացված համակարգ դեռևս ներդրված չէ, ինչը հաշվառման ճշգրտության էական ռիսկեր է պարունակում, հաշվի առնելով նաև համակարգի աշխատակիցների մեծ թիվը: Հաշվառման բաժնի յուրաքանչյուր աշխատակից ամսական իրականացնում է միջինը՝ թվով 600-700 աշխատակցի աշխատավարձի և այլ եկամուտների հաշվառում:

Թեև հաշվարկները ստուգվում են հաշվարկային բաժնի գլխավոր մասնագետի, բաժնի պետի, ֆինանսատնտեսական վարչության պետի և գլխավոր քարտուղարի կողմից, այնուամենայնիվ, ստուգման համար սահմանված որևէ մոտեցում կամ մեթոդաբանություն չի կիրառվում, ինչը վկայում է հաշվարկված աշխատավարձի վերստուգման ոչ բավարար արդյունավետության մասին:

Աշխատանքային պայմանագրերի բովանդակության անհամապատասխանություններ

Աշխատակիցների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը Նախարարության կանոնադրության 11-րդ կետի համաձայն պատրաստվում են անձնակազմի կառավարման վարչության կողմից: Սակայն, աշխատակցի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի որոշումը և դրա հիման վրա պայմանագրում դրույքաչափի լրացման գործառույթը իրականացվում է ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից, որը սահմանված չէ այդ վարչության կանոնադրությամբ:

Միաժամանակ, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը չեն ներառում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի, աշխատանքային պայմանագրի բովանդակության մի շարք պարտադիր պայմաններ, մասնավորապես՝ պայմանագրերում ներառված չէ 84-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված ամենամյա արձակուրդի տեսակը (նվազագույն, լրացուցիչ, երկարացված) և տևողությունը:

Աշխատողների չօգտագործված արձակուրդային օրերի հաշվարկի համակարգի ռիսկեր

Աշխատողների չօգտագործված արձակուրդային օրերի հաշվարկը միաժամանակ իրականացվում է և կադրերի և ֆինանսական վարչության կողմից, որտեղ առկա է գործառույթների ոչ արդյունավետ բաշխում և իրականացում: Միևնույն ժամանակ, արձակուրդային օրերի հաշվառման որևէ ծրագրային համակարգ, տվյալների

միասնական բազա կամ այլ մոտեցում չի կիրառվել, այլ իրականացվում է մատյանների և Excel ֆայլի միոցով, որը լրացուցիչ աշխատատարություն է պահանջում և տվյալների արժանահավատության ապահովման ռիսկեր է պարունակում:

«Աշխատանքի վարձատրություն» հոդվածով ծախսերի ընտրանքային ստուգման արդյունքները

«Աշխատանքի վարձատրություն» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով հաշվեքննության ստանդարտներին համապատասխան կատարվել է ընտրանք, կիրառելով՝ Դրամական միավորի ընտրանքի սկզբունքը: Հաշվեքննությամբ արձանագրվել է.

- Փրկարար ծառայողների կրտսեր խմբերի աշխատողներին աշխատանքի են ընդունում «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ այն է եռամսյա ուսումնական փորձաշրջան անցնելուց հետո: Օրենքի 9-րդ մասի համաձայն ուսումնական դասընթացներ

**Ուսումնական փորձաշրջան անցնող
աշխատակիցների համար
պաշտոնային դրույքաչափը
սահմանել է դրույքաչափի 50%-ի
չափով, ինչի հետևանքով պակաս է
վճարվել 269.7 հազ. դրամ**

անցնող քաղաքացիները ծառայողներ
չեն համարվում, և նրանց հետ
կնքվում է ՀՀ աշխատանքային
օրենսգրքով նախատեսված
ժամկետային (ուսումնական
փորձաշրջանի ժամկետով)
աշխատանքային պայմանագիր, և
վճարվում է տվյալ պաշտոնի համար

սահմանված պաշտոնային դրույքաչափով: Նախարարությունը՝ չպահպանելով Օրենքի պահանջը, ուսումնական փորձաշրջան անցնող աշխատակիցների պաշտոնային դրույքաչափը սահմանել է տվյալ պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափի 50%-ի չափով: Այսպես՝

- Փրկարար ծառայության տնօրենի 09.09.2019թ. 17/1171-Ա հրամանի համաձայն Հ.Ս.Մ.-ն նշանակվել է ՀՀ Սյունիքի մարզի փրկարարական վարչության Սիսիանի հրշեջ փրկարարական ջոկատի վարորդ, պայմանագրի գործողությունը սահմանվել է 3 ամիս ժամկետով, աշխատավարձի չափը՝ 66.140 դրամ, որը կազմում է պաշտոնային դրույքաչափի 59.2%-ը, ինչի հետևանքով չի պահպանվել Օրենքի պահանջները և վերջինիս փորձաշրջանի ժամանակահատվածի համար պակաս է վճարվել է 136.8 հազ. դրամ:
- Փրկարար ծառայության տնօրենի 27.11.2019թ. 17/1514-Ա հրամանի համաձայն Ա.Դ.Դ.-ն նշանակվել է Կապանի հրշեջ փրկարարական ջոկատի

վարորդ, կնքվել է պայմանագիր 3 ամիս ժամկետով, աշխատավարձի չափը՝ 66.140 դրամ, որը կազմում է պաշտոնային դրույքաչափի 59.9%-ը, ինչի հետևանքով չի պահպանվել Օրենքի պահանջները և վերջինիս փորձաշրջանի ժամանակահատվածի համար պակաս է վճարվել 132.9 հազ. դրամ:

- Արտակարգ իրավիճակների նախարարի 11.02.2013թ. N224 հրամանով հաստատված «Փրկարար ծառայողների հերթական (ամենամյա) արձակուրդի տրման» կարգի 2-րդ կետի համաձայն փրկարար ծառայության գլխավոր, ավագ և միջին պաշտոններ զբաղեցնող ծառայողների հերթական արձակուրդը տրամադրում է ԱԻՆ-ի նախարարը, իսկ կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին՝ ԱԻՆ-ի փրկարար ծառայության տնօրենը:

**Փրկարար ծառայողների
արձակուրդի տրամադրման և
վճարման գործընթացը չի
համապատասխանում
օրենսդրական պահանջներին**

Փրկարար ծառայողների արձակուրդի տրամադրման փաստացի գործընթացը ոչ միայն չի իրականացվում նախարարի հրամանի պահանջներին համապատասխան, այլև հակասում է ՀՀ

աշխատանքային օրենսգրքի պահանջներին: Այսպես, արձակուրդի մեկնող փրկարար ծառայողների արձակուրդի տրման գործընթացը կազմակերպվում է առանց պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համապատասխան հրամանի: Փրկարար ծառայության կադրերի վարչության կողմից կազմվում է 3 մասից բաղկացած արձակուրդի կտրոն: Կադրերի և ֆինանսատնտեսագիտական վարչությունների պետերի կողմից այդ կտրոնը ստորագրվելուց հետո, աշխատողը համարվում է արձակուրդի մեջ: Կտրոնի առաջին մասը մնում է արձակուրդ գնացող փրկարար ծառայողի մոտ, 2-րդ մասը ֆինանսատնտեսագիտական վարչությունում, իսկ 3-րդ մասը ետ է վերադարձվում կադրերի վարչություն:

Միաժամանակ, չի պահպանվել նաև փրկարար ծառայողների արձակուրդային վճարների հաշվարկման և տրամադրման կարգը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն արձակուրդ գնալուց առաջ աշխատողին պետք է հաշվարկվի և վճարվի միջին աշխատավարձ, որը օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաշվարկվում է միջին օրական աշխատավարձը տրամադրվող օրերի թվով բազմապատկելու միջոցով: Սակայն, չի պահպանվել օրենսդրական պահանջները, արձակուրդ մեկնող փրկարար ծառայողների համար ոչ միայն չի իրականացվում արձակուրդի միջին հաշվարկ,

այլ, միևնույն ժամանակ, չի պահպանվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ:

Ստացվում է, որ փրկարար ծառայողը ոչ թե գտնվում է արձակուրդում, քանի որ փաստացի բացակայում է արձակուրդի տրամադրման մասին իրավական ակտը (Նախարարի կամ ՓԾ տնօրենի հրաման), այլ արձակուրդի օրերի թվով նշված ժամանակահատվածում աշխատանքի չի հաճախում և տվյալ ամսվա վերջում ստանում է միայն հասանելիք աշխատավարձը:

- ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ սահմանվել է փրկարար ծառայության առանձնահատկությունների համար տրվող հավելումների հաշվարկման մեծությունների չափերը, ըստ պաշտոնների դասակարգման խմբերի: ՀՀ կառավարությունը 26.09.2019թ. թիվ

**Նախարարության կողմից չի
հաստատվել ծառայության
առանձնահատուկ պայմանների
հաշվառման և
փաստաթղթավորման կարգը**

1278-Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում մարմնի ղեկավարը պետք է հաստատի որոշմամբ սահմանված ծառայության առանձնահատուկ պայմանների

հաշվառման և փաստաթղթավորման կարգը:

Նշված կարգը մինչ օրս Նախարարության կողմից չի հաստատվել, ինչի հետևանքով ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման գործընթացը լիարժեք չի իրականացվել:

Որոշման 11.1 հավելվածի 4-րդ սյունակում սահմանվել է ծառայության առանձնահատուկ պայմանները, իսկ որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հավելումները պետք է հաշվարկվեն համապատասխան պայմաններում ծառայության փաստացի օրերի դիմաց: Սակայն, Նախարարության կողմից չի պահպանվել նշված ենթակետերի պահանջները, և փրկարար ծառայության բոլոր աշխատողներին (այդ թվում՝ հավելվածով չնախատեսված ծառայողներին) համապատասխան նախատեսված հավելումները վճարել է յուրաքանչյուր ամիս՝ առանց հաշվառելու և հաշվի առնելու համապատասխան պայմաններում ծառայության փաստացի օրերի թիվը:

- 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում Փրկարար ծառայության ծառայողների պարգևատրման վերաբերյալ Նախարարի հրամաններում որպես հիմք հղումներ է

կատարվել այնպիսի իրականացման ակտերի, որոնք չեն կարող հիմք հանդիսանալ հրամանով նախատեսված պարզապատկերման համար: Օրինակ՝ 2020թ. ապրիլի 2-ի թիվ 445, ապրիլի 29-ի թիվ 516, մայիսի 27-ի հրամաններում հղում է կատարվել՝

- «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասին, սակայն տվյալ հոդվածով ընդամենը սահմանվում է, որ՝ մեղալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը,
- ՀՀ կառավարության 03.07.2020թ. 737-Ն որոշման 3-րդ կետին, որի համաձայն մարմնի ղեկավարին իրավունք է վերապահել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին բարեխիղճ աշխատանքի համար խրախուսել քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, սակայն վերոնշյալ հրամաններով պարզապատկերվել են նաև քաղաքացիական ծառայողները,
- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, սակայն նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանում է, որ 22-րդ հոդվածի 1-8 մասերի դրույթները չեն տարածվում Փրկարար ծառայության վրա:

- Փրկարար ծառայության համակազմում գործող փողային նվազախմբի երաժիշտների պաշտոնային դրույքաչափերը սահմանվում է ՀՀ կառավարության 03.07.2014թ. «Պետական

Թվով 4 աշխատակցի դրույքաչափի գործակցի ոչ ճիշտ սահմանման հետևանքով 2020թ. առաջին կիսամյակում ավելի է հաշվարկվել և վճարվել 1,476.25 հազ.դրամ

իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին»

թիվ 737-Ն որոշման 1-ին հավելվածի «Փրկարար ծառայություն բաժնի» 71-րդ կետով, որի համաձայն՝ երաժիշտների պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը կազմում է 1.3 (գործակից): Որոշման 4-րդ կետի համաձայն որոշումը տարածվում է 2014թ. հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: 2014թ. հուլիսի 1-ից հետո, որպես երաժիշտ աշխատանքի են ընդունվել թվով 4 աշխատակից (Ռ.Տ.՝ հր17/1713- 25.12.2015թ., Մ.Ն.՝ հր17/84-Ա-29.01.2020թ., Ն.Մ.՝ հր17/660-22.05.2017թ., Ռ.Մ.՝ հր17/1816-20.12.2016թ.), որոնց դրույքաչափի հաշվարկման գործակիցը 1.30 գործակցով հաշվարկելու փոխարեն հաշվարկվել է

2.23 գործակցով, որի հետևանքով 2020թ. առաջին կիսամյակում վերոնշյալ աշխատակիցներին ավելի է հաշվարկվել և վճարվել 1,476.25 հազ.դրամ գումար:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712 որոշմամբ սահմանված հավելավճարները նախատեսվում է վճարել կոնկրետ աշխատանքի և

**2020թ. առաջին կիսամյակում
ավելի է հաշվարկվել և վճարվել
6,024.4 հազ.դրամ հավելավճար**

ժամանակահատվածի համար, որի ցանկում երաժիշտների համար հավելավճարներ չի նախատեսվում, սակայն, Նախարարության կողմից 21 երաժիշտի յուրաքանչյուր ամիս վճարվել է 47.8 հազ. դրամ, որի հետևանքով

2020թ. առաջին կիսամյակում 21 երաժիշտներին ավելի է հաշվարկվել և վճարվել 6,024.4 հազ.դրամ գումար:

- Համաձայն «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե) ենթակետի՝ փրկարար ծառայության աշխատողների աշխատանքի վարձատրությունը սահմանվում է Օրենքի 8-րդ հավելվածով, որի հիմքում ընկած է աշխատանքային ստաժի մակարդակները, ինչպես նաև զինվորական կոչումները: Միաժամանակ, «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը:

**Փրկարար ծառայողների
աշխատանքային ստաժը և
պաշտոնային դրույքաչափի
հաշվարկման գործակիցը
նախատեսվածից ավելի բարձր է
սահմանվել**

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարությունը չպահպանելով վերոնշյալ օրենսդրական պահանջները, Փրկարար ծառայողների ստաժի հաշվարկման մեջ ներառել է նաև պարտադիր զինվորական ծառայության համապատասխան ժամանակահատվածը, ինչի

հետևանքով ծառայողների աշխատանքային ստաժը և պաշտոնային դրույքաչափի

հաշվարկման գործակիցը արհեստականորեն ավելի բարձր է սահմանվել և հանգեցրել աշխատավարձի ավել Վճարումների:

- Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, այն է՝ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր: Արձանագրվել է, որ մի շարք դեպքերում՝ օրինակ Փրկարար ծառայության տնօրենի 24.01.2020թ. 130-Ա, 29.01.2020թ. թիվ 17/84-Ա, 17/85-Ա և 17/86-Ա հրամաններ և այլն, չի պահպանվել օրենքի պահանջները, և նշյալ հրամաններով պաշտոնների միաժամանակ նշանակվել և ազատվել են համապատասխանաբար թվով 22, 21, 25 և 5 աշխատակիցներ:

Հաշվի առնելով վերոնշյալ երևույթների համատարած բնույթը և դրանց հնարավոր էական ազդեցությունը հաշվետվությունների արժանահավատության վրա, Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի 9 ամիսների և տարեկան հաշվեքննությունների շրջանակում դեռևս կանդիդատնա աշխատանքի վարձատրություն հոդվածում արձանագրված անհամապատասխանություններին:

ԱԻՆ դիրքորոշում 1: Ինչ վերաբերում է պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը փրկարար ծառայության սրաժի մեջ ներառելուն, ապա պետք է նշել, որ նախարարությունը ղեկավարվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, 61-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերով: Մասնավորապես օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ հոդվածի համաձայն զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակադրոնական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան:

ԱԻՆ դիրքորոշում 2: Բացի այդ, ավելի քան 10 տարի պետական բյուջեում զինվորական ծառայողների աշխատավարձի համար պահանջվող տարեկան գումարը հաշվարկվել և հայտի տեսքով ներկայացվել է հետևյալ կերպ՝ զինվորական ծառայողների ամսական վարձատրության չափը բազմապատկած 12 ամիսներով:

ԱԻՆ դիրքորոշում 3: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները չպահպանելու և անհատական իրավական ակտերով աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորելու առնչությամբ հարկ է ընդգծել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն անհատական ակտ է սույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտեր, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների (այսուհետ՝ անձ) համար:

ԱԻՆ դիրքորոշում 4: ՀՀ կառավարության 03.04.2014թ. N 712-Ն որոշմամբ սահմանված հավելումները երաժիշտներին տրվել են՝ հաշվի առնելով վերջիններիս պաշտոնի անձնագրով սահմանված պարտականությունները, մասնավորապես, արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող

իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացվող այլ աշխատանքների կատարման համար:

Հաշվեքննողի արձագանք 1: Չի ընդունվել, քանի որ «Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա» եզրահանգումը, որևէ իրավական հիմնավորում չի պարունակում:

Հաշվեքննողի արձագանք 2: Չի ընդունվել, քանի որ ներկայացված բացատրությունը որևէ իրավական հիմնավորում չունի, իսկ ոիևէ իրավական հիմնավորում չպարունակող հաշվարկ չի կարող հիմնավոր համարվել միայն այն պարճառով, որ այն կատարվում է «ավելի քան 10 տարի շարունակ»:

Հաշվեքննողի արձագանք 3: Չի ընդունվել, քանի որ դիրքորոշումը ընդամենը մեջբերում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքից և չի պարզաբանում հաշվեքննությամբ ներկայացված անհամապատասխանությունը:

Հաշվեքննողի արձագանք 4: Չի ընդունվել, քանի որ այդ աշխատակիցների պաշտոնի անճագրով սահմանված «այլ աշխատանքների կատարումը» չի կարող համարվել ծառայության առանձնահատուկ պայմաններ և հիմք հանդիսանալ հավելավճարների տրամադրման համար, առավել ևս, որ «այլ աշխատանքների կատարման» վերաբերյալ որևէ տեղեկատվություն ևս առկա չէ:

➤ Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին

Պետական բյուջեից «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2020թ. նախատեսվել է հատկացնել 2,728,432.1 հազ. դրամ, որից առաջին կիսամյակում՝ 1,223,717.60 հազ. դրամ: 2020թ. առաջին կիսամյակում փաստացի և դրամարկղային ծախսը կազմել է 1,223,717.60 հազ. դրամ:

Հոդվածի շրջանակներում Նախարարության և վերջինիս ենթակայության տակ գործող ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքվել է դրամաշնորհի 10 պայմանագրեր:

Աղյուսակ 3.
դրամ

	Ստացողի անվանումը	Պայմանագրի գումար	1-ին կիսամյակում վճարված գումար	Մնացորդ	Նպատակ
1	Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն ՊՈԱԿ	97,741,800.00	41,051,600	56,690,200	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2	Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն ՊՈԱԿ	736,819,300.00	332,144,100	404,675,200	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
3	Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ՊՈԱԿ	1,313,140,500.00	551,519,000	761,621,500	Հիդրոօդերևութաբանական ծառայություններ
4	Պահուստ ՊՈԱԿ	189,910,700	89,529,450	100,381,250	Պետական ռեզերվների գործակալության համակարգի

					հիմնարկների պահպանում
5	Լազուր ՊՈԱԿ	137,810,100	67,776,550	70,033,550	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
6	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	46,297,200	19,444,800	26,852,400	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
7	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	54,000,000	54,000,000	-	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
8	Աղետների բժշկության կենտրոն ՊՈԱԿ	18,707,700	7,795,500	10,912,200	Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ
9	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա ՊՈԱԿ	126,283,600	56,827,600	69,456,000	Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ
10	Ռուս- հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն ՄՈԱԿ	7,721,200	3,629,000	4,092,200	Պետական աջակցություն ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնին
	Ընդամենը	2,728,432,100	1,223,717,600.00	1,504,714,500.00	

Հաշվի առնելով այն, որ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով ծախսը կատարվել է Նախարարության ենթակայության տակ գործող կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից 2020թ. հունիսի 18-ին ընդունված թիվ 973-Ա, 974-Ա, 975-Ա, 976-Ա որոշումներով լուծարվել են «Լազուր», «Պահուստ», «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» և «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ները, ինչպես նաև ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության հետևանքով վեց ամսվա հաշվեքննության կասեցումը, սույն հոդվածի մասով ծախսերի արժանահավատության գնահատում առաջին կիսամյակում չի իրականացվել, այն կիրականացվի պետական բյուջեի 2020թ. ինը ամիսների և տարեկան հաշվեքննությունների իրականացման շրջանակներում:

➤ **Տրանսպորտային նյութեր**

Նախարարությանը ՀՀ պետական բյուջեից «Տրանսպորտային նյութեր» հոդվածով 2020թ. նախատեսվել է հատկացնել 238,736.0 հազ. դրամ (ՀՀ ԱԻՆ ՓԾ՝ 221,072.0 հազ. դրամ, ԱԻՆ՝ 17,664.0 հազ. դրամ), որից առաջին կիսամյակում՝ 105,107.2 հազ. դրամ (ՀՀ ԱԻՆ ՓԾ՝ 97,158.4 հազ. դրամ, ԱԻՆ՝ 7,948.8 հազ. դրամ): 2020թ. առաջին կիսամյակում փաստացի ծախսը կազմել է 89,465.89 հազ. դրամ (ՀՀ ԱԻՆ ՓԾ՝ 82,513.44 հազ. դրամ,

ԱԻՆ՝ 6,952.45 հազ. դրամ), իսկ դրամարկղայինը՝ 87,153.62 հազ. դրամ (<< ԱԻՆ ՓԾ՝ 79,743.65 հազ. դրամ, ԱԻՆ՝ 7,409.97 հազ. դրամ):

Համաձայն ՀՀ կառավարության 17.02.2005թ. թիվ 194-Ն որոշման՝ Նախարարության համար ծառայողական մեքենաների թվաքանակ սահմանված չէ, սակայն աշխատակազմի ենթակայության տակ գտնվում են թվով 20 տրանսպորտային միջոցներ:

ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշմամբ սահմանվում է ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի

Մեքենաների մի շարք մոդելների համար նորմատիվներ սահմանված չեն, որոշ մեքենաների համար էլ սահմանված ժամկետում նորմատիվը չի վերանայվել

վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, իսկ որոշման մեջ չընդգրկված և նոր մոդելի ավտոմեքենաների համար կարող են սահմանվել վառելիքի ծախսերի ժամանակավոր նորմաներ՝ մեկ տարի ժամկետով: Հարկ է նշել, որ Նախարարության մեքենաների մի շարք մոդելներ ՀՀ կառավարության 01.06.2005թ.

թիվ 1001-Ն որոշման մեջ ընդգրկված չեն, ավելին, վերջիններիս համար նույնիսկ ժամանակավոր նորմաներ չեն սահմանվել:

Իսկ ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության մեքենաների որոշ մոդելների համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 06.04.2018թ. թիվ 339 հրամանով սահմանվել են նորմատիվներ, սակայն որոշ մոդելներ նույնիսկ այդ ցանկում ներառված չեն: Համաձայն ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման ժամանակավոր նորմաները սահմանվում են մեկ տարի ժամկետով, սակայն մինչ օրս նոր հրաման առկա չէ:

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում (ՄԺԾԾ) և բյուջետային հայտում մեքենաների վառելիքի ծախսերի հաշվարկում առկա են որոշակի թերացումներ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Համաձայն ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման՝ 8 տարուց ավելի մաշվածություն ունեցող մեքենաների համար վառելիքի ծախսը ավելացվում է 5%-ով սակայն ՄԺԾԾ-ում վառելիքի հաշվարկի հիմնավորման ծանոթագրությունում նշված է, որ ծախսը ավելանում է 10%-ով:
- Համաձայն ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման՝ 500,000-ից ավել բնակչություն ունեցող քաղաքներում վառելիքի ծախսը ավելանում է մինչև 15%, սակայն ծախսը ավելացել է 15%՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքում մեքենայի ծախսի մեծ մասը չի

իրականացվում էր թևակցության մեջ, այլ կատարվում է օրինակ՝ մասնագիտական պարապմունքների կամ տեխնիկական սպասարկումների ընթացքում:

ԱԻՆ դիրքորոշում: ՀՀ կառավարության 01.06.2005թ.-ի թիվ 1001-Ն որոշման համաձայն 8 տարուց ավելի մաշվածություն ունեցող մեքենաների համար վառելիքի ծախսն ավելացվում է 5%-ով, մինչև 10 տարուց ավելի մաշվածություն ունեցող մեքենաների համար վառելիքի ծախսն ավելացվում է 10%-ով: Նշված նորմատիվները կիրառվում են միջնաժամկետ ծախսային ծրագրերում իրականացվող վառելիքի ծախսի հաշվարկների ժամանակ: Ինչ վերաբերվում է Երևան քաղաքում իրականացվող երթևեկությանը՝ վառելիքի ծախսի 15%-ի ավելացման մասով, պետք է նշել, որ մասնագիտական պարապմունքների և տեխնիկական սպասարկումների նպատակով երթևեկությանն իրականացվում են Երևանի մեջ:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ նախարարի հրամանը չի կարող հակասել առավել բարձր իրավական ուժ ունեցող Կառավարության որոշմամբ սահմանված դրույթներին, իսկ դիրքորոշման «տեխնիկական սպասարկման ժամանակ երթևեկությունն իրականացվում է Երևանի մեջ» ձևակերպումը հիմնավոր չէ:

Մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթերը և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերը չի լրացվել:

Սահմանված կարգով չի լրացվել մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթերը և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերը: Մասնավորապես, երթուղային թերթերում չի լրացվել վազքի ցուցիչի ցուցմունքները, դուրս գալու և վերադառնալու ժամը և այլն: Իսկ

շահագործման քարտերում հերթափոխը ամսվա բոլոր օրերի համար չի լրացվել:

➤ Ներքին գործուղումներ

Պետական բյուջեից Նախարարությանը ներքին գործուղումների համար 2020թ. առաջին կիսամյակում նախատեսվել է հատկացնել 1,301.7 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 113.9 հազ. դրամ:

«Փրկարար ծառայության» ծրագրով ներքին գործուղումների համար 2020թ. առաջին կիսամյակում նախատեսվել է հատկացնել 40,227.9 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 5,404.7 հազ. դրամ:

Բոլոր գործուղումների համար բացակայում է ներկայացված հաշվետվությունը իսկ վճարումները կատարվել են գործուղումից հետո

ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի համաձայն՝ գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված

ծախսերի հաշվետվությունը, գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը: 2020թ. առաջին կիսամյակում իրականացված բոլոր գործուղումների համար բացակայում է ներկայացված հաշվետվությունը:

ԱԻՆ դիրքորոշում: ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի պահանջները չպահպանելու վերաբերյալ պետք է նշել, որ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայողները գործուղման ժամանակ հաշվետվություն չեն ներկայացնում՝ պայմանավորված գործուղման ընթացքում նրանց գործառույթների առանձնահատկություններով՝ հրապույտ և անկանխատեսելի բնույթով, անհետաձգելի աշխատանքների իրականացման բարդությամբ, սակայն վերջիններս ներկայացնում են զեկուցագրեր կատարված աշխատանքի բովանդակության մասին: Գործուղման ծախսերը վճարելու նպատակով նրանց տրամադրվում են գործուղումը հավաստող վկայական և գործուղման ծախսերը հավաստող անհրաժեշտ փաստաթղթեր:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ գործուղման հաշվետվությունը ներկայացվում է ոչ թե գործուղման ժամանակ, ինչպես ներկայացված է դիրքորոշման մեջ, այլ գործուղումից վերադառնալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ օրենքով սահմանված կարգով:

Միաժամանակ, Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի առաջին մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Ներքին գործուղումների նպատակով՝ 2020թ. առաջին կիսամյակի բոլոր վճարումները կատարվել են գործուղումից հետո:

➤ Նախարարության կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ

Նախարարության կարիքների համար 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում կնքվել է թվով 125 պայմանագիր՝ 643,369.01 հազ. դրամ ընդհանուր արժեքով, իսկ փաստացի ծախսը կազմել է 249,823.9 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. առաջին կիսամյակում բոլոր պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը չի կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով, և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները, իսկ Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 110-րդ կետի պահանջները՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Նախարարության կողմից իրականացված գնումների գործընթացի համապատասխանությունը գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին կուսումնասիրվի 2020թ. 9 ամիսների հաշվեքննության շրջանակներում:

ԱԻՆ դիրքորոշում: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացը կազմակերպելու» կարգի 110-րդ կետով սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակով, մասնավորապես պայմանագրի կատարման արդյունքի ընդունումն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կատարելու համար, կտրվի համապատասխան հանձնարարական:

Հաշվեքննողի արձագանք: Հաշվի առնուլով այն հանգամանքը որ պետական բյուջեի 9 ամիսների հաշվեքննության շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել Նախարարության կողմից իրականացված գնումների գործընթացի համապատասխանությունը գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, նշված հանձնարարականի կատարմանը անդրադարձ կկատարվի հետագա հաշվեքննության շրջանակներում: